

## Այս համարում

### Հայերեն բաժին

- |   |   |
|---|---|
| 1- Թշթի 14-րդ ՊԺ-ի ընտրությունները..... | 1 |
| 2- Լուրեր - Իրանահայ համայնք .....      | 2 |
| 3- Լուրեր - Հայաստան.....               | 2 |
| 4- Լուրեր - Իրան.....                   | 4 |
| 5- Լուրեր - Սիցազգային.....             | 6 |
| 6- Հարցազրոյց.....                      | 6 |
| 7- Խոհեր.....                           | 9 |

Սյունակների սղության պատճառով  
Հրաշյա Աճառյանը Պարսկաստանում  
եւ Հայ հիմ գրականություն հոդվածների  
շարունակությունը կտուագրվի հաջորդ համարում

### Պարսկերեն բաժին

- |                                    |   |
|------------------------------------|---|
| 1- Լուրեր - Իրանահայ համայնք ..... | 1 |
| 2- Լուրեր-Իրան,Հայաստան.....       | 2 |

#### Շապիկի առաջին էջում՝

Երեւան-Ռուբրու

#### Շապիկի վերջին էջում՝

Վիլհամ Սարոյան - 100

Համար 147, Նոյեմբեր 2008թ.

No. 147, November 2008

1387 ձ 147 մայ 1387 - Լուսահայության շաբաթ


## ԹՇԹԻ 14-ՐԴ ՊԺ-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ցուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ Թեհրանի և հյուսիսային քաղաքների իրանահայերը ընտրում են իրենց համայնքի գերագույն մարմնն՝ Պատգամավորական ժողովը: ՊԺ-ի քանակը կազմում է շորջ 56 հոգի, որտեղ 7 հոգևորականները նշանակվում են Սրբազն Հոր կամ ընտրվում են Կրոնական Խորհրդի կողմից:

2008 թվականի Նոյեմբերի 21-ի ընտրությունների համար առաջադրվել էին ենթակայ թեկնածուները տարբեր թաղամասերի համար՝ 1- Ս. Մարգմանչաց եկեղեցու շրջան 24 հոգի, որից պետք է ընտրվի 13 հոգի: 2- Ս. Շարդանանց եկեղեցու շրջան 4 հոգի, որից պետք է ընտրվի 3 հոգի: 3- Ս. Աստվածածին եկեղեցու շրջան 4 հոգի, որից պետք էրնտրվի 3 հոգի: 4- Ս. Սարգիս եկեղեցու շրջան 20 հոգի, որից պետք է ընտրվի 13 հոգի: 5- Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շրջան 25 հոգի, որից պետք է ընտրվի 9 հոգի: Որոշ փոքր քաղաքների թեկնածուների ցանկը ժամանակին չհրատարակվեց և մեծ հավանականությամբ դժվարություն կար թեկնածուներ գտնելու հարցում: Այսպիսով՝ Թեհրանում առաջադրված 77 թեկնածուներից պետք է ընտրվեն 41 պատգամավոր, սարանց գումարվելու են տարբեր քաղաքների մեկական պատգամավորների ու 7 հոգևորականներ:

Ինչպես երևում էր այստեղ երեկո կողմեր էին հիմնականում պայքարում ՀՅԴ- կողմից կազմված ցանկերը ոչ կուսակցական և ժողովրդական ցանկերի հետ, որտեղ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շրջանում այս պայքարը ավելի ցայտուն էր երևում: Բոլոր կողմերը բացի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ժողովրդավարական երիտասարդ շրջանակը դժվարացել էին թեկնածուներ որոնելու գործում, թեկուզ կուսակցությունը նաև չնայած, որ այս անգամ մտադրված էր ամբողջովին տիրանալ և բացարձակ մեծամասնություն կազմել ՊԺ-ում, սակայն թեկնածու որոնելու գործում նաև ունեցել էր դժվարություններ: Այստեղ արտագարի և համայնքի նորացման ազդեցությունը շշափելի էր:

Քվեատարածքներում քվեաբրիկները հաշվելու ժամանակ ըստ 2000 թվականի հաստատված օրենքի ցանկացող թեկնածուները իրավունք ունեն ներկա լինելու ընտրատարածքներում, սակայն այս անգամ կանոնական Ընտրական Հանձնախումբը այդ օրենքը անտեսելով արգելել էր թեկնածուների ներկայությունը քվեաբրերիկների հաշվարկնամ ժամանակ, սա կասկածանիք էր կամ թեկնածուների քվեաբրը կամ գրանցողը երե ցանկանա կամ միտում ունենա կամ ուղղություն ստացած լինի որևէ մեկի կողմից հանգիստ կարող է որևէ թեկնածուի կամ թեկնածուների քվեաբրը օգուտ ուրիշ թեկնածուի ընթերցի կամ գրանցի և որևէ հակողություն չի կարող լինել, հատկապես այս անգամ, որ դաշնակցությունը ամեն գնով աշխատել էր միայն իր թեկնածուներին ընտրել տալ: ԿԸՀ-ի պատճառաբանությունը այն է, որ թեկնածուների քանակը շատ է և քվեատարածքներում խճողում կառաջանա, սակայն դրա համար կարելի էր անցյալի նման վիճակահանությամբ ինչ քանակով, որ հարմար էին նկատում իրավունք տալ թեկնածուները ներկա գտնվեին և ընտրությունների կեղծելու կասկածի առիթը վերացնեին: Այս առաջարկը նույնպես ներկայացվել էր ԿԸՀ-ին սակայն նրանք անտեսեցին:



Աշեմիկ Բաղդասարյան

Ռ. Սարդարյան

## Բրանիակայ Համայնք

**Կայացավ Թ. Ն. թեմի 14-րդ շրջանի  
Պատգամավորական ժողովի ընտրությունը**

Նոյեմբերի 21-ին, կայացավ Թեհրանի հայոց թեմի 14-րդ շրջանի Պատգամավորական ժողովի ընտրությունը, որի արդյունքում որպէս աշխարհական անդամներ՝ ընտրվեցին 48 պատգամավորներ, որոնց կողմանը հոգեւորական 7 անդամներ՝ քահանայից դասից: Ընտրությունները կայացան Թեհրանի հայոց թեմի 5 քաղաքանակություն և պատկան թեմի 6 քաղաքներում: Նախնական արդյունքով, որը մեզ է տրամադրել ընտրությունների Կենտրոնական ընտրական հանձնախումբը, ընտրվել են հետևյալները.

### ա- Ս. Աստվածածին եկեղեցու շրջան

- 1- Արմեն Սկրտչյան՝ 104 քվե
- 2- Սեղիկ Մարգիրյան՝ 103 քվե
- 3- Արա Շիրվանյան՝ 89 քվե

### բ- Ս. Սարգսի եկեղեցու շրջան

- 1- Վարդան Վարդանյան՝ 828 քվե
- 2- Արա Շահնազարյան՝ 681 քվե
- 3- Արշավիր Քեշիշյան՝ 634 քվե
- 4- Վարդիկ Թորոսյան՝ 626 քվե
- 5- Գրիգոր (Գրիշ) Մանուկյան՝ 620 քվե
- 6- Էմիլ Մնացականյան՝ 589 քվե
- 7- Հերոս Ավանեսյան՝ 574 քվե
- 8- Սայիս Սիմասյան՝ 542 քվե
- 9- Վարդիկ Հակոբյան՝ 527 քվե
- 10- Էդիկ Ղահրամանյան՝ 519 քվե
- 11- Սեղամիկ Այղինյան՝ 494 քվե
- 12- Հակոբ Հակոբյան՝ 494 քվե
- 13- Նիկոլ Մուսախանյան՝ 465 քվե

### գ- Ս. Վարդանանց եկեղեցու շրջան

- 1- Ռազմիկ Այղինյան՝ 176 քվե
- 2- Գուրգեն Քարամյան՝ 146 քվե
- 3- Ժոնես Գրիգորյան՝ 141 քվե

### դ- Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շրջան

- 1- Շաքի Ավետյան՝ 1174 քվե
- 2- Աշոտ Սիմանին՝ 1077 քվե
- 3- Ալեքսր Քոչարյան՝ 1022 քվե
- 4- Էլիսու Մասեհյան՝ 979 քվե
- 5- Վահե Խաչատրյան՝ 960 քվե
- 6- Ռոբերտ Մարգարյան՝ 943 քվե
- 7- Ռոզիկ Տերյանիսիսյան՝ 921 քվե
- 8- Հենրիկ Կարսակսյան՝ 902 քվե
- 9- Վարոն Հայինյան՝ 892 քվե

### է- Ս. Թարգմանչաց եկեղեցու շրջան

- 1- Գետրոց Արքույան՝ 934 քվե
- 2- Արմեն Հայրապետյան՝ 825 քվե
- 3- Ռայմոնդ Փարիս՝ 814 քվե
- 4- Ալվարդ Այղինյան՝ 795 քվե
- 5- Ժողով Սնիրարյան՝ 714 քվե
- 6- Վահե Բարբայան՝ 687 քվե
- 7- Ռուբեն Սարգսյան՝ 670 քվե
- 8- Արմեն Բեգիարյան՝ 657 քվե
- 9- Խաչիկ Քեշիշյան՝ 651 քվե
- 10- Հրաչ Խսախանյան՝ 641 քվե
- 11- Գորգեն Քեշիշ Հարությունյան՝ 629 քվե
- 12- Հայկակ Շիրվանյան՝ 611 քվե
- 13- Հրաչ Սարկոսյան՝ 598 քվե

**Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսի այցը Ս. Աստվածածին եկեղեցի եւ Արտակ արք. Մանուկյանի անվանք Ազգային թանգարանի բացումը**

Մեծի Տանն Կիլիկիո Արամ Ա կաթողիկոսը այցելեց Թեհրանի Ս. Աստվածածին եկեղեցի: Նա, հրաշափառ-ի երգեցորդամբ, իր շքախմբով մնաց գործեց եկեղեցի, ուր կատարվեց կանոնական աղոթք, ապա Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Սեպուհ արք. Սարգսյանը բարիգալստյան խոր ասաց Վեհափառ Հայրապետին, որից հետո Վեհափառն իր խորը ուղղեց ներկա ժողովին: Այնուհետեւ տեղի ունեցավ աջհամբույր, որից հետո Վեհափառ Հայրապետը, իր շքախմբով, ուրախ լերե շարականի երգեցորդամբ, ուղղվեց եկեղեցու շրջափակում գտնվող Թեհրանի հայոց թեմի նախկին առաջնորդ լուսահոգի Տ. Արտակ արք. Մանուկյանի անվանք՝ Ազգային թանգարանը, որի բացումը կատարեց ժապավենի հասումով եւ կրոնական կարճ արարողությամբ:

### ՊԺ-ի անտեղի նիստը

14-րդ Պատգամավորական ժողովի ընտրապայքարը ընթացքի մեջ էր, երբ 13-րդ ՊԺ-ի դիվանը որոշում ներկայացրեց նոյեմբերի 11-ին անցկացնել ՊԺ-ի 56-րդ նիստը: Նիստի օրակարգի թեմաներն էին՝ 1- Ժողովի բացում Տերունական աղոթքով, 2- Ներկայության ստուգում, 3- Նախորդ արձանագրությունների ընթերցում, 4- Կիլիկիո Կաթողիկոսության Ազգային ժողովի պատգամավորների ընտրություն, 5- Այլ հարցեր՝ ժողովի տնօրինությամբ:

Այս օրակարգերի մեջ Կիլիկիո Կաթողիկոսության Ազգային ժողովի համար պատգամավորների ընտրության հարցը շատ հետաքրքիր է, մի հարց, որ ՊԺ-ն չի կարողացել քանի նիստերի ընթացքում որոշում կայացնել. 14-րդ շրջանի ՊԺ-ի ընտրապայքարի պայմաններում ՊԺ-ի հարգելի դիվանը ուղեցել է ի մի բերել: Ինչո՞ւ: Սա մտածելու տեղիք է տալիս և դրա պատասխանը բողնում ենք ընթերցողներին ու համայնքի նուվորականությանը:

Բոլորին համար պարզ էր, որ 13-րդ շրջանի պատգամավորների մի մասը, որոնք թեկնածու են 14-րդ ՊԺ-ի համար, զբաղված էին իրենց ընտրապայքարով: Խակ մյուսները արդեն համարում էին, որ ՊԺ-ի 13-րդ շրջանը ավարտված է, որի համար էլ նախատեսված 56-րդ նիստը քվորում չունեցավ: Հոյստվ ենք, հաջորդ դիվանը նաև սիսամներ կամ որոշումներ բույլ չի տա և նիստերի գումարման հետ կապված բոլոր գործոնները հաշվի կառնի:

## Հայասպան

### ՀԱՐՁԱԿՈՒՄ ԼՐԱԳՐՈՂ ԷԴԻԿ ԲԱՐԴԱՍԱՐՅԱՆԻ ԿՐԱ

Նոյեմբերի 17-ի երեկոյան ժամը 20-ի շուրջ, «Երեւան-նախագիծ» շենքի մոտակայքում, 3 անհայտ անձանց կողմից հարձակման է ենթարկվել «Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի նախագահ եւ «Հետք» ինտերնետային թերթի խմբագիր Էդիկ Բարդասարյանը: Առանց որևէ բար արտասանելու նրանք հարվածել են լրագրողի զիսին: Առատ արյունահոսություն



## Հոյս Ամսագիր

Ակավելուց հետո հարձակվողները փախտաստ են տվել, մինչ այդ խելով լրագրողի քուտյացիկը: Դեպքի վայր հասած շտագօճնության աշխատակիցներն առաջին օգնությունը ցույց տալուց հետո Էղիկին տեղափոխել են Նոր Նորքի հիմանդրանց: Ուստի կանությունը հետաքննություն է սկսել:

Հիշեցնեանք, որ Եղիկ Բաղդասարյանը վերջես արժանացել էր հետաքննող լրագրողների միջազգային միուրյան 1-ին մրցանակին: Վերջին շրջանում նա մի քանի նյութեր էր հրապարակել որոշ պաշտոնյաների տնտեսական-նյութական շահատակուրյունների մասին:


Հիշեցնենք նաև, որ Հայաստանում լրագրողների դեմ կատարված նմանօրինակ վայրագույքունները ցարդ չեն բացահայտվել:

## «ՀԱՅՓՈՍԻ» ՏԽՈՐԵՆ ՀԱԱՍ ԲՈՆԸ ՇԵՈՒԱՑՎԿ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Անցած շաբաթ ՀՀ նախագահին եւ վարչապետին «Հայփոստ» ընկերության զիլավոր տնօրեն Հանս Բոնը իր հրաժարականի մասին փոստով նամակ էր ուղարկել: Ենթադրվում է, որ արև Բոնը նմտահոգված է իր անվտանգությամբ ու այդ պատճառով հետաքել է Հայաստանից: Վերջին վեց ամսում արև Բոնին երկու անգամ ծեծի են ենթարկել: Իսկ թե ի՞նչն է պատճառը, երեկ «Ազգը» խմբեց պարզաբանել ՀՀ ոստիկանության Երեսան քաղաքի վարչության պետի օպերատիվ գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ Աշոտ Միրիջանյանին: Վերջինս տեղեկացրեց, որ այդ երկու դեպքերով էլ հարուցվել է քրեական գործ: Առաջին անգամ՝ հունիսի 2-ին Հանս Բոնին ծեծել են Պուչկինի փողոցի վերջնամասում: Կենտրոն, Նորք-Մարաշ դատարանը կայացրել է դատավճիռ, ըստ որի, գործով մեղադրյաներ Յորիք Օհանյանը դատապարտվել է 9 ամսվա, իսկ Մամմելի Հովհաննիսիսանը՝ 6 ամսվա կայանի:

Երկրորդ դեպքը հարուցվել է քրեական գործ՝ 28.10.2008-ի դատարձիկի տվյալ եզրակացության իման վրա: Քանի որ սուժող Հանն Բոնը ստովականությանը հայտնել է, որ վնասվածքներ է ստացել վայր ընկնելու հետևանքով, գործին ընթացք չի արկեն, իսկ դատարժիկները պարզել են, որ նման վնասվածքներ հնարավոր չեն ընկնելուց ստանալ, և սուժողը ոգեից խմիչք է օգտագործած եղել... Տուժողը մեկնել է Հոլանդիա ու նրան հարզանել չի հաջողված:

**Հայաստանի, Ադրբեյջանի եւ Ռուսաստանի  
նախագահները ստորագրել են Լեռնային Ղարաբաղի  
հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ հշչակագիր**



**ՍՈՍԿՎԱ, ՅՆՉԵՄՐԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:** Սոսկվայում նյութերի 2-ին Հայաստանի, Աղբեջանի և Ռուսաստանի նախագահները ստորագրել են Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ հոչակագիր:

## «ՕՐԵՆԵՐԳԸ ՍԱՐՍԱՓԵԼԻ Է, ԶԻՆԱՆՁԱՆՔ՝ ԽԵՂԿԱՏԿՈՒԹՅՈՒՆ»

Ըստով Ազգային ժողովը կրննարկի «Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին» օրենքով

լրացումներ կատարելու օրինագիծը: Մինչ այդ զինանշանի եւ օրիներգի փոփոխման կապակցությամբ երեկ ժուռնալիստի տանը բավականին լորջ նոտահոգություն հայտնեց քանիակազործ Ֆերինանդ Առաքելյանը:

«Զինանշանը սիմվոլիկ նշանակություն ունի: Այն պետք է արտացոլի ազգի այսօրվա եռոյթն ։ Զինանշանի եւ օրիներգի մեջ պետք է փայլեն ազգի ողին, կարողություններն ու մշակույթը: Դարեւ շարունակ երազում էնք անկախ պետականություն, սակայն այսօր չենք պահում: Այդ զինանշանն իր արվեստով արժեք չի ներկայացնում: Զինանշանի վրա վեց-յոթ կենդանի կա պատկերված: Դա ազգի՝, թե ... կենդանաբանական այգու զինանշան է: Խևկական խելացատակություն: Օրիներգն էլ սարսափելի է, երաժշտությունը գեղեցիկ է, բայց՝ տփուր», ասաց Առաքելյանը՝ հավելելով, որ այսօր տգիտությունը հալրում է, մշակույթը՝ զիջում: Անդրադասնալու վերջերս ՀՅԴ բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանի հայտարարությանը, թե «պարտադիր չէ, որ օրիներգի գեղարվեստական արժեքը բարձր լինի», բանդակագործը նկատեց: «Չի՛ կարելի կուսակցական ամբիցիայով մոտենալ ազգին առնչվող հարցերին: Չի՛ կարելի կուսակցական շահերով նայել ամեն ինչին: Մեզանից յուրաքանչյուրի առջեւ նախ պետք է դրված լինի ազգայինի շահը: Ամբողջ աշխարհը փառաբանում է Արամ Խաչատրյանի արվեստը, իսկ մենք այսօր չենք ընդունում նրա գրած երաժշտությունը: Եթե չեք ընդունում նրա գրած երաժշտությունը, ապա ինչո՞ւ եք բժմադրում նրա օպերաները»:

Քանդակագործն առաջարկում է ընդունել Խաչատրյանի երաժշտությունը, իսկ օրիներգի խոսքերի համար հայտարարել նոր մրցույթ: Եթե լինեն ավելի լավ գործեր, Առաքելյանը պատրաստ է ընդունել, սակայն եթե չկա, լավագույն տարբերակը խորիղային օրիներգի ընդունումն է:

Առաքելյանը նշեց, որ որոշ ժամանակ առաջ մի խումբ մտավորականներ բաց նամակով դիմել են մի շարք ատյանների, սակայն ապարդյուն: Սակայն քանիսակագործը պատրաստ է զնալ ԱԺ ու այնտեղ էլ բարձրածայնել խնդիրը: «Կապայքարենք մինչեւ վերջ, որպեսզի այս խայտառակության վերջը դրվի», եզրափակեց Ֆերդինանդ Առաքելյանը:

Ներկայացվեց «Վերադարձ Հայաստան»  
տեղեկատվական ինտերնետային համակարգը

ԵՐԵՎԱՆ, 5 ՆՈՅԵՄԲՐԻ, ԱՐՄԵՆԻԱ: ՀՀ կառավարության գործունեության ծրագրով մշակվել են ներքին է օտարերկրյա պետություններում բնակվող մեր հայրենակիցների վերադարձը խրանող «Վերադարձ Հայաստան» տեղեկատվական ինտերնետային համակարգը, որի նպատակն է այդ նարդկանց հնարավորություն ընձեռել էլեկտրոնային հաղորդությներով անմիջականորեն կազմվել պետական այս կամ այն հաստատության հետ:

Համակարգին արդեն մի քանի ամիս է՝ տեղադրված է [www.mta.gov.am](http://www.mta.gov.am), [www.sma.am/migrant](http://www.sma.am/migrant), [www.backtoarmenia.a](http://www.backtoarmenia.a) մ ինտերնետային կայքերում։ Այն կնպաստի, որպեսզի հայրենիք վերադառնալու մտադրություն ունեցողներն այդ ուղղությամբ գործնական քայլեր իրականացնեն։

«Խոչընդոտներից ամենազիշխաղը անորոշությունն է. մարդկան զիտեն, թե ինչ է իրենց սպասվում Հայաստան վերաբանապուց հետո: Հետեւարար նրանց պետք է տրամադրվի արժանահավատ, բարձացվող եւ ճշգրիտ տեղեկատվություն, ինչը կնպաստի վերադարձի վերաբերյալ որոշման ընդունմանը», - այսօր հրավիրած ասուլիսում ասաց ՀՀ տպածրային կառավարման նախարարության

միզրացին գործակալության պետ Գագիկ Եղանյանը:  
Գ. Եղանյանը մանրամասներով համակարգի էռոքյունը՝  
նշեց, որ եթե առաջին մակարդակում այցելուն չի գտնում  
իրեն հետքրքրող հարցի պատասխանը, կարող է օգտվել  
համակարգի երկրորդ մակարդակից, որտեղ  
հանրամատչելի, հարց ու պատասխանի տեսքով  
Հայաստանի հասարակական կյանքի բոլոր ոլորտների  
վերաբերյալ տեղադրված են տեղեկություններ:

Երրորդ մակարդակն այցելուն հնարավորություն է  
ընձեռում իրեն հետաքրքրող կոնկրետ հարցն ուղղել  
համակարգին: Միզրացին գործակալությունը, կաված  
հարցի բնույթից, այն ուղղում է համակարգի ցանցում  
ընդգրկված վեց նախարարություններից իրավասուին: Պատասխանը նոյն ճանապարհով հաղորդվում է  
քաղաքացիներին:

Համակարգի չորրորդ մակարդակը թույլ է տալիս ուղիղ  
համացանցային կապի միջոցով՝ օնլայն ռեժիմով, կազմակերպել հարցագրույց կայք-էջի այցելուի և  
համապատասխան պետական պաշտոնյայի հետ: Ի դեպ,  
Գ. Եղանյանը նշեց, օտարերկրյա քաղաքացիները նույնպես  
կարող են օգտվել համակարգից՝ հեղեղ Հայաստանի  
վերաբերյալ իրենց հետաքրքրող հարցերը:

Անցած մի քանի ամիսների ընթացքում համակարգի  
ծառայություններից շորջ 200 մարդ է օգտվել: Ստացված  
արձագանքները փաստել են, որ այս ծառայության  
պահանջը զգացվում է: Այժմ գործակալությունը համակարգի  
գործունեության վերաբերյալ իրագեկման աշխատանքներ է  
իրականացնում:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ Յ ՍԼՍ 235 ԸՆԴՀԱՐ Է

Սշտական բնակչության բվարանակն այս տարվա  
առաջին ինն ամիսների տվյալներով կազմել է 3 մլն 235,0  
հազ., որից 2 մլն 073,4 հազ. բաղադրային բնակչության: Ինչպես  
«Արմենպրեսին» տեղեկացրին ազգային  
վիճակագրական ծառայությունից, բնակչության  
բվարանակը տարեսկզբի համեմատ աճել է 4,9 հազ., իսկ  
2007-ի նոյն ժամանակահատվածի համեմատ՝ 8,3  
հազարով: Տարեսկզբի դրությամբ, Հայաստանի մշտական  
բնակչության 67,2 տոկոսը կազմել են աշխատունակ  
տարիքի, 20,8 տոկոսը՝ աշխատունակ տարիքից ցածր, իսկ  
12,0 տոկոսը՝ աշխատունակ տարիքից բարձր մարդկի: Հանրապետության  
1000 աշխատունակ տարիքից բնակչությանը բնակչությանը  
է ընկել 489 տարեց եւ երեսա (0-15  
տարեկան): Սշտական բնակչության միջին տարիքն այս  
տարեսկզբի դրությամբ կազմել է 34,3 տարի: Այս տարվա  
առաջին ինն ամիսներին հանրապետությունում  
արձանագրվել է 29 հազ. 823 ծննդն, ինչը 2007-ի նոյն  
ժամանակաշրջանի համեմատ աճել է 3,1 տոկոսով: Նոյն  
ժամանակահատվածում հանրապետությունում գրանցվել է  
մահացության 20 հազ. 532 դեպք՝ նախորդ տարվա նոյն  
ժամանակահատվածի համեմատ 1,1 տոկոսով ավելի: Մահացության  
ընդհանուր գործակիցը 1000 բնակչի հաշվով  
կազմել է 8,5 պրոմիլե:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՈՂՈՔԻ ՆՈՏԱ ԿԱԵՐԿԱՅԱՏԻ Ս. ՆՈՐԱՃԵՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՌՆՉՈՒԹՅԱՆԲ

Նաեւ Հայաստանի ԱԳՆ-ում բացատրություն

կապահանջվի Վրաստանի դեսպանից

Թրիխի Ս. Նորաչեն եկեղեցու շորջն առաջացած նոր  
լրագրության մասին Հայաստանի կառավարության  
մոտեցման վերաբերյալ տրված հարցին պատասխաններով,  
երեկ Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը

հայտնեց, որ այս հարցը բարձրացվել է երկու երկրների  
վարչապետների հանդիպման ժամանակ, Վրաստանի  
վարչապետը խոստացել էր այն պահել ուշադրության  
կենտրոնում, որպեսզի հայր Թարիելի ոտնձգորակուններին  
վերջ տրվի: «Յավոր սրբի, այդ անձնավորությունը  
շարունակում է ակտիվ գործողությունները այդ եկեղեցու  
տարածքում», ասաց Տիգրան Սարգսյանը, ավելացնելով, որ  
այդ կապակցությամբ Հայաստանի արտաքին գործերի  
նախարարություն է հրավիրվելու Հայաստանում  
Վրաստանի դեսպանը, ու բացատրություն է պահանջվելու  
նրանից: Ինչպես նաեւ Վրաստանում Հայաստանի դեսպանը  
բողոքի նոտա է ներկայացնելու Վրաստանի  
իշխանություններին: Հայաստանի վարչապետը  
միաժամանակ նշեց, որ վերջերս, երկու երկրների  
նախագահների հանդիպման ժամանակ երկխոսության եւ  
փոխըմբռնման նոր մակարդակ է ձեռք բերվել եւ այս  
գործողությունները չեն բխում այդ երկխոսության  
մընողությունից: Տիգրան Սարգսյանը համոզնում հայտնեց, որ  
վրաց գործնկերները օպերատիվ կլուծեն այս հարցը, որը  
խնդիրներ է առաջացնում տեղի հայկական համայնքի  
համար: Նա նաեւ կարեւորեց Վրաստանի հետ մեր երկրի  
հարաբերությունները:

## 13,6 ՍԼՍ ՌՈԼԱՐ ԾԱՅԱՍՏԱՆԻՆ

Արժույթի միջազգային հիմնադրամի գործադիր  
խորհրդը նոյեմբերի 17-ին հաստատել է Հայաստանին  
13,6 միլիոն ԱՄՆ դոլար վարկի տրամադրումը՝  
«Աղքատության կրածաման եւ տնտեսական աճի» (ԱԿՏԱ)  
ծրագրի շրջանակներում:

## Իրաց

### ԻՐԱԸԸ ՄԵՐԺՈՒՄ Ե ԹՈՒՐՁԻԱՅԻ ՄԻՋԱՌՐՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՍՆ-Ի ՇԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՈՒՄ

Անցյալ շաբաթ «Նյոյ Յորք բայցմ» թերթին տված  
հարցազրույցում Թուրքիայի վարչապետ Ռեֆուկ Թայիիի  
Երդողանը հայտարարել էր, որ ԱՄՆ-ի նախագահի  
պաշտոնում Բարաք Օբամայի լնարությունը պատեհ  
առիթներ է ստեղծել Թեհրանի հետ Վաշինգտոնի  
հարաբերությունները վերափոխելու համար եւ Անկարան  
պատրաստ է միջնորդի դեր ստանձնել երկու երկրների  
միջև:

Էրդողանի այս խոսքերին արձագանքել է Իրանի  
Իպահանական Հանրապետության արտգործնախարարության  
մամուլի խոսնակ Հասան Քաջավին: Նա, ինչպես  
նոյեմբերի 17-ին կայքէջում նշել է ԻՐՆԱ գործակալությունը,  
մամուլի ամենաշարաջան ասուլիսում ասել է. «Կարծում ենք,  
որ այդ հայտարարությունները բխում են Թուրքիայի բարի  
կամքից եւ Իրանի հետ հետզինետե զարգացող  
բարերարացիական հարաբերություններից, սակայն ԱՄՆ-ի  
հետ Իրանի խնդիրները վեր են առօրյա քաղաքական  
խնդիրներից, Իրանում կայանական հեղափոխությունից  
հետո անցած 30 տարիներին ամերիկացիները բացասական  
նոտեցում են ցուցաբերել Իրանի նկատմամբ»:

Քաջավին միաժամանակ նշել է, որ Օբաման ասպարեզ  
է իշել կարգախոսներով, իննա արդեն անհրաժեշտ է տեսնել,  
թե որքանով է լրց նրա հակվածությունը  
վերափոխություններին: Իրանի արտգործնախարարության  
խոսնակի արձագանքը ցոյց է տալիս, որ Թեհրանի եւ  
Վաշինգտոնի միջև Անկարայի միջնորդական  
առաքելության մասին հայտարարելիս վարչապետ  
Էրդողանը նախագահ չի դիմել իրանական կողմի կարծիքն,

# Հոյս Ամսագիր

Թեհրանը կասկածանքով է վերաբերվում Օրամայից ակնկալվող վերափոխումներին, թերեւս դրա համար է նախազգուշացնում է Թուրքիային և դիվանագիտական քաղաքավարության շրջանակներում մերժում է վերջինի միջնորդական առաքելությունը ԱՍՄ-ի հետ հարաբերություններում:

## ՆՃԵՑ ՖԱՂԵՅ ՍԱՐԳԱՅԱՆԻ ԾՆՆԴԱՆ 85-ԱՄՅԱԿԸ



Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում երեկ անցկացվեց Ֆաղեյ Սարգսյանի 85-ամյակին նվիրված գիտաժողով:

«Ֆաղեյ Սարգսյանը մեր ապրած ժամանակի և իրականության կենսական հարատուրյունն է, որին ճանաչելը հավասարագոր է կյանքի ճշնարտության բացահայտման», ելույթում նշեց գորդ-հրապարակախոս Զորի Բալայանը:

Ֆ. Սարգսյանի մասնագիտական գործունեությունը սկսվել է Երևանի ճարտարագիտական համալսարանից (1940-1942 թթ.), այնուհետև շարունակվել Տոմսկի գինուրական էլեկտրատեխնիկական կամաց ակադեմիայում: 1967-1977 թթ. հայրենական ռադիոլոկացիոն տեխնիկայի գարգացմանը նվիրված նրա աշխատանքները մեծ ներդրումներ են եղել ռադիոէլեկտրոնային միկրոսխեմաների, բարդ սարքավորումների մշակման արտադրման գործում: Նկարագրելով խոշորագույն ձեռքբերումները հանրապետության հաշվողական տեխնիկայի զարգացման գործում, Զ. Բալայանն առանձնանացրեց հորելյարի դերն ու գործունեությունը «Հրազդանմերենա»՝, «Արարու», «Մարա», «Տրանզիստոր» միավորումների, ինչպես նաև մի շաբթ նոր էլեկտրոնային հաշվիչ մերենաների ստեղծման և շահագործման մեջ:

Ֆաղեյ Սարգսյանը, տարբեր միջազգային ակադեմիաների անդամ է: Արժանացել է պետական բազմաթիվ մրցանակների, պարգևնատրվել ՌԴ բնակչությունների ակադեմիայի պատվավոր մեդալով և Հանուվերի (Գերմանիա) բնակչությունների արվեստների ինստիտուտի «Ուլիե թագ» աստղով: Հուշերն ու հայ ժողովրդի խորհրդային տարիների կենտրոնացմանը մեջ նշանակալի նույնականությունը Ֆ. Սարգսյանն ամփոփել է «Կյանքի դասերը» ինքնակենսագրականում:

85-ամյակի առթիվ հորելյարին շնորհավորեցին Գարեգին Բ Վեհափառը, Վաղիմիր Սովոսյանը, ակադեմիկոս Էմիլ Գարբիելյանն ու այլ պատվավոր այրեր: Սննդարձան երեխույրի ավարտին Ֆ. Սարգսյանը պարգևնատրվեց Եվրոպական ակադեմիայի «Սուրբ Գեւորգ» մեդալով, եւ ցուցադրվեց ռեժիսոր Սարինա Արելյանի «Հայր» վավերագրական ֆիլմը:

### Համաշխարհային Հայկական Կոնգրեսի մրցույթ

Համաշխարհային Հայկական Կոնգրեսը (ՀՀԿ) և Ռուսաստանի հայերի միությունը (ՌՀՄ) ՀՀ կրթության և գիտության նախարարության աջակցությամբ արդեն 4 տարի անցկացնում են «Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք» խորագործ շարադրության միջազգային մրցույթ բարձր դասանցների և ուսանողների միջև: Այս տարվա մրցույթի բեման էր «Մենք ուժեղ ենք, եր միասին ենք», որի արդյունքները ամփոփվել են ամռանը: Մրցույթին կարող էին մասնակցել Հայաստանի Հանրապետությունից, Արցախից, հայկական սփյուռքից: մասնակիցները պետք է բացահայտեն թեմայի կարևորությունը հայերին համար, որ այս գաղափարի շուրջն էլպետը է միավորվեն աշխարհով մեկ սփուզած հայերը:

-Միշտ հիշենք, որ ուժի ո հզորության անսպառ աղբյուրը միասնությունն է, - ամփոփում է իր խոսքը ՀՀԿ-ի նախագահ Արա Արքահայանը 2008թ. այն ժողովածովի մեջ, որտեղ ամփոփված են մրցանակ ստացողների շարադրությունները: Ստորև ներկայացնում ենք գլխավոր մրցանակակիրներից մեկի՝ ԼՂՀ Ասկերանի շրջանի Խնածախ գյուղի միջն. դպրոցի աշակերտուիկի Արմեն Ավագիմյանի շարադրությունը և «Լավագույն բանաստեղծության համար» անվանակարգում հաղթած՝ ԼՂՀ, Ասկերանի շրջանի Նորագոյնի Վիտայի Պետրոսյանի անվան միջն. դպրոցի աշակերտուիկ Գայանե Հայրյանի բանաստեղծությունը:

### Հարթանակները ինչպես եղել են Սամվել Բարյայանի գրքի շնորհանդեսը

2008 թվականի սեպտեմբերի 23-ին Արմենիա հյուրանոցում տեղի ունեցած Արցախի բանակի նախկին հրամանատար և ազգային հերոս Սամվել Բարյայանի գրքի շնորհանդեսը: Ներկա էին պաշտոնական և ոչ պաշտոնական հոյրեր: Ներկայացվեց Սամվել Բարյայանի կյանքն ու հաղթանակները, որ նա ղեկավարել է Արցախում, ցուցադրվեց հաղթանակների ու Արցախյան պատերազմի տեսաերկիցներ:

Գրքի սկզբում տրված է Սամվել Բարյայանի խոսքը, որտեղ ասում է. - «Ես խոնարհում եմ այն 6 հազար գրիկան ազատամարտիկների պայծառ հիշատակի առջև, ովքեր իրենց արյունով վերագծեցին 12 հազար քառակուսի կիլոմետր տարածքով մեր սահմանները: Սենք բոլորս շատուցած պարտ ունենք նրանց տալու»:

Գրքի հեղինակներն են Հենրիկ Խաչատրյանը, Գարեգին Ղազարյանը և Սիրվարդ Մարգարյանը: Գիրքը լույս է տեսել Հայկական-Հանրապիտարան, Հրատարակչության կողմից 2008 թվականին Երևանում:

Գիրքը բաղկացած է հետևյալ բաժններից՝ 1- Անավարտ պատմություն, 2- Օմարից մինչև Արարու, 3-Պետականաշինության բավկաներում, 4-Հարցազորույցների ընտրանի, 5-Վեցարանի փոխարեն:

### Գլոբալ Հայաստան ծրագրի շնորհանդես

ՍԱԿ-ի երեսնայան գրասենյակում կայացավ ՍԱԿ-ի «Գլոբալ Հայաստան» նախճեռնությունը, որի նպատակն է ամրապնդել սփյուռքահայության հետ համագործակցությունը: Ծրագրի եւ կայքեջի շնորհանդեսին ներկա էին ՀՀ ուսումնական ակադեմիկոսների ղեկավարներ, միջազգային կազմակերպությունների եւ ՀՀ-ների անդամներ, հյուրեր: Միջոցառումը բացեց եւ ներկաներին ողջունեց ՍԱԿ-ի մշտական համակարգող Կոնսուլել Վիդալը ու ներկայացրեց ծրագիրը: «Հանրականարար» գորբա ցանց եւ նպատակ ունենալով կապել Հայաստանը զիտելիքներին, փորձին եւ ուսուլամերին, մենք նաև նպատակ ենք հետապնդում այս

գործնքացների մեջ ներգրավել ամբողջ սփյուռքահայությանը, որը պետության կարեւոր արժանիքներից մեկն է: ՍԱԿ-ի ինստիտուցիոնալ կարդիոլոգիներով, մեխանիզմներով, մեթոդներով եւ կարգավիճակով մենք առաջարկում ենք հայկական սփյուռքի անհատներին եւ կազմակերպություններին համագործակցել եւ աջակցել այն անձանց, որոնք կերտում են ավելի լավ կյանք Հայաստանում»: Գիտելիքների փոխանցման ծրագրի կարեւորությունը ողջունեցին ՀՀ արտգործնախարար Արման Կիրակոսյանը, սփյուռքի հետ կապերի պետկոմի նախագահ Հրանուշ Հակոբյանը, ՀՔԸՄ տնօրենների կենտրոնական խորհրդի անդամ Երվանդ Զորյանը: Տես Հրանուշ Հակոբյանը շնորհակալություն հայտնեց ծրագրի կազմակերպիչներին՝ նման կարեւոր ու արթերագոր գործնքացի համար ու տեղեկացրեց, որ մի քանի օրից սփյուռքի նոր նախարարությունը եւ ՍԱԿ-ը կատորագրեն համաձայնագիր՝ ուժերի համախմբման եւ սփյուռքայրենից գործակցությունը գորացնելու համար:

## Միջազգային գանցում գործելու Է եկոպական գրադարան

ՓԱՐԻԶ, 18 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Համաշխարհային ցանցում բացվում է եկոպական Ելեկտրոնային գրադարան, որը հնարավորություն կրնածերի ծանրանալու Եվրամիության երկների մշակութային ժառանգության ավելի քան երկու միլիոն հուշարձանների:

Ինչպես Ավինինում հաղորդել է Եվրամիության տեղեկատվական հասարակության եւ զանգվածային լրատվամիջոցների հարցերի հանձնակատար Վիլիան Ռեյնզը, նոյեմբերի 20-ից բոլոր ցանկացողները կկարողանան անվճար օգտվել [www.europeana.eu](http://www.europeana.eu) պորտալի տեղեկատվությունից:

Այս «երազանքի իրականություն դարձավ» Եվրամիության մի քանի հարյուր մշակութային հիմնարկությունների ջանքերի շնորհիվ, նշել է հանձնակատարը: Վիրտուալ գրադարանի ստեղծման գործում հիմնական ավանդը ներդրել է Ֆրանսիան՝ տրամադրելով գետեղված նյութերի 52 տոկոսը: «Սա ֆանտասիկ արկածի սկիզբն է միայն», ընդգծել է Ռեյնզը: Նրա խոսքով, այս ռեսուրսը կդառնա ննտերնետում եկոպական մշակութի մարմնավորումը:

## ԱՄՆ-ի նախագահ Է ընտրվել Բարաք Օբաման

ՎԱՀԻՆԵԳՏՈՆ, 5 ՆՈՅԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ-ի 44-րդ նախագահ է ընտրվել Բարաք Օբաման: Երեքարքի օրը կայացած ընտրությունների արդյունքներով նա անհասնելի է դարձել իր մրցակից հանրապետական սենատոր Զոն Մակրեյնի համար: Մակրեյնը, չսպասելով ձայների վերջնական հաշվարկին, ընդունել է իր պարտությունը նախագահական ընտրություններում և հեռախոսազրույցում շնորհագորել է Օբամային հաղթանակի առթիվ:



## ԹՈՒՐԵ ՂԵՍՊԱՍՆԵՐՈ ԱՉԱՏ ԵՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ

Թուրքական «Զաման» թերթի լրատվության համաձայն, Անկարան արտասահմանում գործող իր դեսպանատմներին իրավունք է վերապահել Հայաստանի անկախության տարեդարձի ընդունելություններին մասնակցելու որոշումը կայացնելու: Մինչ օրս, 1960-70-ական թվականներից, Անկարան իր դեսպանատմներին իրավանակերպել էր չմասնակցել Հայաստանի դեսպանատմների իրավերներին: Այս տարի նման իրահանգ չի տրվել եւ բուրքական դեսպանատմների հայեցողության է բողնովել մասնակցելու շմասնակցելու որոշում կայացնելը ըստ տվյալ երկրի հայկական գաղութի դիրքորոշմանը, ցեղասպանության վերաբերյալ տարված աշխատանքներին եւ այլն:

Նոր մոտեցումն, ըստ «Զամանի» եւ դիվանագիտական շրջանակների, դժվարության առաջ է կանգնեցնելու բուրք դեսպաններին, քանի որ այսքան երկար տարիների բացակայությունից հետո նրանք անհարմար վիճակում են լինելու հայ դիվանագիտների շրջապատում: Ուստի, թերթի կարծիքով, հավանական է, որ այսուհետեւ, առնվազն մեկերկու տարի, բուրք դեսպաններն իրենց ավագ խորհրդականներ ուղարկեն նման միջոցառություններին մասնակցելու: Այս մասին է տեղեկացնում Կահիրենում լույս տեսնող «Արեւ» թերթը:

## Հարցագրություն

### Հարցագրույց Հայաստանում բնակվող լիբանանահայ գետրգ Յազիջյանի հետ

2008 թվականի սեպտեմբերի 17-22-ը տեղի ունեցավ համահայկական լրատվամիջոցների համաժողով, որտեղ ներկա էր նաև Հայաստանի շրջանավարտ պատմության գիտությունների թեկնածու Հայաստանում բնակվող լիբանանահայ պրն. Գևորգ Յազիջյանը, որի հետ մտերիմ գրույցը ներկայացնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը:

Հ.- Խնդրում ենք Ձեզ ներկայացնել:

